

Կազմված է 19.01.2023թ. և բաղկացած է 8 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Մ Է

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

19 հունվարի 2023թ.

թիվ 6 որոշմամբ

Համայնքի ղեկավար

Դիանա Գասպարյան

Կ.Տ.

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Մ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 07.06.2022 թ.

գրանցման համար 99.215.1242531

ՀՎՀՀ՝ 04442758 _____

07.06.2022թ. գրանցված կանոնադրության թիվ

____.____ փոփոխությունը գրանցված է

իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի կողմից “____” _____ 20____թ.

աշխատակից՝

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՄԱՐԶԱԴՊՐՈՑ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրություն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վաղարշապատի համայնքապետարանի «Մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ Մարզադպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ուսումնամարզական գործունեություն իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ իրեն ամրագրված իրավունքներ և պարտականություններ:

2. Մարզադպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու կարգադրություններով և սույն կանոնադրությամբ:

3. Մարզադպրոցի հիմնադիրը Վաղարշապատ համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս համայնքի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ Հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին՝ հանդես է գալիս Վաղարշապատ համայնքի ղեկավարը:

4. Մարզադպրոցը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Մարզադպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

6. Մարզադպրոցը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

7. Մարզադպրոցն ունի Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքի զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և (կամ) դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուներով:

8. Մարզադպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Մարզադպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մարզական և սպորտային հաստատությունների և կազմակերպությունների հետ:

10. Մարզադպրոցում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

11. Մարզադպրոցի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ Վաղարշապատի համայնքապետարանի «Մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

ռուսերեն լրիվ՝ «Детско-юношеская спортивная школа» общинная некоммерческая организация мэрии Вагаршапат.

անգլերեն լրիվ՝ «Children and youth sports school» community non-profit organization of the Municipality of Vagharshapat:

12. Կազմակերպության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Սբ. Գրիգոր Լուսավորչի փողոց 9/1:

II. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

13. Մարզադպրոցի գործունեության հիմնական նպատակներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով պարապողների առողջության պահպանումը և ամրապնդումը, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակված անձի ու քաղաքացու համակողմանի ձևավորումը,

- 2) ընտրած մարզաձևում պարապողների մարզական ընդունակությունների կատարելագործումը,
- 3) հատուկ մարզական պատրաստության միջոցով Հայաստանի Հանրապետության ազգային հավաքական թիմերի համար հերթափոխի պատրաստումը և համալրումը,
- 4) սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծումը, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների գեղագիտական, ֆիզիկական զարգացումը,
- 5) հանրակրթական դպրոցների հետ սերտ կապի հաստատումը, ֆիզկուլտուրային-արտադասարանական աշխատանքների, ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման օժանդակումը:
- 6) Հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

14. Մարզադպրոցի գործունեության առարկան համապատասխան ուսումնական ծրագրերի պահանջների իրականացումն է՝ կառավարման միասնական մոդելի ներդրման միջոցով:

15. Մարզադպրոցում գործում են սկզբնական պատրաստականության, ուսումնամարզական, մարզական կատարելագործման և մարզական բարձրագույն վարպետության խմբեր:

16. Մարզադպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների գուցորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Մարզադպրոցի աշխատանքի հիմնական ցուցանիշ է համարվում՝

- 1) պարապողների խմբի կայունության պահպանումը,
- 2) վարպետ թիմերի և ազգային հավաքական թիմերի, օլիմպիական հերթափոխի մարզական քոլեջների համալրումը,
- 3) օլիմպիական, աշխարհի, Եվրոպայի առաջնությունների և այլ միջազգային մրցաշարերի մասնակից մարզիկների պատրաստումը:

18. Մարզադպրոցի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին: Մարզադպրոցը ունի մասնաճյուղեր որոնք գործում են ամբողջ տարվա ընթացքում՝ կապված իրենց գործնական ոլորտից ապահովելով 51-52 և (կամ 45-46) շաբաթվա համար նախատեսված շուրջամյա մարզումներ: Մարզադպրոցի համակազմի և ուսումնական խմբերի հրամանագրումը կատարվում է ամեն տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը:

19. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացը կառուցվում է առանձին մարզաձևերի ուսումնական ծրագրերի պահանջների հիման վրա:

20. Մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացի հիմնական ձևերն են խմբակային ուսումնամարզական և տեսական պարապմունքները, աշխատանքն անհատական պլանով, բժշկավերականգնողական միջոցառումները, մասնակցությունը մրցումներին, հավաքներին և մարզական-առողջարարական ճամբարներին:

21. Մարզադպրոցը կարող է կազմակերպել հետևյալ ուսումնամարզական հավաքները՝

- 1) հանրապետական մրցումների նախապատրաստական հավաքներ,
- 2) միջազգային մրցումների նախապատրաստական հավաքներ,
- 3) ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստականության հավաքներ:

22. Մարզադպրոցն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով միջազգային կապեր հաստատելու օտարերկրյա մարզական կազմակերպությունների հետ, կազմակերպելու մարզական պատվիրակությունների փոխայցելություններ, համատեղ միջոցառումներ:

23. Մարզադպրոցը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

- 1) լրացուցիչ մանկավարժական, ֆիզկուլտուրային-առողջարարական ծրագրերի իրականացում, սովորողների և աշխատողների հանգստի կազմակերպում,
- 2) ճամբարների կազմակերպում:

III. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

24. Մարզադպրոցի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

25. Մարզադպրոցի հիմնադիրն ունի Մարզադպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

26. Մարզադպրոցի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- 1) Մարզադպրոցի հիմնադրումը,
- 2) Մարզադպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- 3) Մարզադպրոցին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
- 4) Մարզադպրոցի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
- 5) Մարզադպրոցի կառավարման համակարգի սահմանումը,
- 6) Մարզադպրոցի վերակազմակերպումը և լուծարումը
- 7) Մարզադպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը
- 8) Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

27. Համայնքի ղեկավարը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

28. Համայնքի ղեկավարն ունի հետևյալ լիազորությունները՝

- 1) Մարզադպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 2) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի գործունեության նկատմամբ,
- 3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Մարզադպրոցի գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
- 4) լսում է Մարզադպրոցի գործունեության մասին հաշվետվություններ, քննում Մարզադպրոցի գործունեության վերստուգման արդյունքները,
- 5) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցին ամրացված պետական կամ համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
- 6) վերահսկողություն է իրականացնում Մարզադպրոցի սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ Մարզադպրոցի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
- 7) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Մարզադպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ,
- 8) հաստատում է Մարզադպրոցի տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
- 9) հաստատում է Մարզադպրոցի կառուցվածքը և աշխատողների թիվը,
- 10) սահմանում է մարզական խմբերում պարապողների նվազագույն թիվը՝ ըստ պատրաստության փուլերի:

29. Մարզադպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Հաստատության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Հաստատությանը պատճառած վնասի համար:

Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, համայնքի ղեկավարի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

30. Մարզադպրոցի գործադիր մարմինը (տնօրենը)՝

- 1) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

4) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր,

5) առաջարկության տեսքով համայնքի ղեկավարին է ներկայացնում հաստատության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

6) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Մարզադպրոցի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման և կարգապահական տույժի միջոցներ,

7) կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում,

8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկում դրանց պատշաճ իրականացումը,

9) վերահսկում է Մարզադպրոցի աշխատակիցների՝ իրենց աշխատանքային պարտականությունների կատարման գործընթացը,

10) իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական որակի բարձրացման համար,

11) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը,

12) ապահովում է հաստատության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներայացնում Հիմնադրին,

13) իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

14) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Մարզադպրոցի կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

31. Մարզադպրոցի տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Մարզադպրոցին պատճառված վնասի համար: Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու, պարտականությունները չկատարելու համար:

32. Մարզադպրոցի տնօրենը պարտավոր չէ կատարել հիմնադրի, Մարզադպրոցի լիազորված պետական մարմնի, Մարզադպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

33. Մարզադպրոցի տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որով սահմանվում են Մարզադպրոցի տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, աշխատանքային պայմանագրի դադարման հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերն անհրաժեշտ կգտնեն: Աշխատանքային պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջներին:

34. Մարզադպրոցի տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է Մարզադպրոցի տնօրենի տեղակալը կամ այլ աշխատակիցը:

35. Մարզադպրոցի տնօրենի լիազորությունները դադարեցվում են՝

1) իր դիմումի համաձայն.

2) եթե լրացել է 65 տարին,

3) իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի,

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի,

5) նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել հետևյալ հանգամանքները՝

5.1) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ,

5.2) օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել,

5.3) նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իր պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար,

6) իր գործառույթներն իրականացնելիս Մարզադպրոցին, պետությանը կամ համայնքին իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է Մարզադպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը,

7) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

8) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը,

9) գրկվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից,

10) Մարզադպրոցի կողմից վճարման ենթակա հարկերը կամ սոցիալական ապահովագրության հիմնադրամի վճարները սահմանված ժամկետից հետո իր մեղքով հաշվետու ժամանակաշրջանում չեն վճարվել:

36. Մարզադպրոցի տնօրենի տեղեկալը (այսուհետ՝ տեղակալ) աշխատանքի է նշանակվում և աշխատանքից ազատվում Մարզադպրոցի տնօրենի կողմից: Տեղեկալը պատասխանատվություն է կրում ուսումնամարզական գործընթացի կազմակերպման, ուսումնական փաստաթղթերի վարման, ուսումնական խմբերի ճիշտ համալրման (կոմպլեկտավորում), մարզիչ-մանկավարժների որակավորման բարձրացման համար: Ուսմասվարն իրականացնում է վերահսկողություն ուսումնամարզական գործընթացի անցկացման, պարապոդների կողմից ծրագրային նյութի յուրացման նկատմամբ:

37. Մարզադպրոցի տնօրենին և տեղեկալին թույլատրվում է նույն դպրոցում հիմնական աշխատանքի ժամերի ընթացքում վարել մարզչական աշխատանք 0,5 դրույքի չափով: Վճարումն իրականացվում է մարզիչի դրույքի հաշվարկով:

38. Մարզադպրոցի մարզչական կազմը, որպես կանոն, համալրվում է ֆիզկուլտուրային կրթություն ունեցող մասնագետներից: Մարզիչն իրականացնում է՝

1) մարզական վարպետության հետագա բարձրացման համար պարապոդների միջից հեռանկարային երեխաների ընտրությունը.

2) ուսումնամարզական գործընթացի կազմակերպումը՝ ուսումնական ծրագրի համաձայն,

3) պարապմունքների հաճախումների հաշվառումը:

39. Մարզիչը պատասխանատվություն է կրում մարզական գործընթացի անվտանգության ապահովման համար, հսկողություն է սահմանում պարապոդների նկատմամբ՝ տարատեսակ խթանիչներ չընդունելու համար, ինչպես նաև պատասխանատվություն է կրում նաև մարզական գործընթացի ծրագրման (պլանավորման), աշխատանքի առաջավոր մեթոդների ներդրման, ծրագրային պահանջների վերահսկման, բաժանմունքի միջոցառումների կազմակերպման ու անցկացման համար:

40. Մարզադպրոցի պարապոդների բժշկական սպասարկումն իրականացվում է բժշկական անձնակազմի միջոցով:

IV. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

41. Մարզադպրոցի սեփականությունը ձևավորվում է Մարզադպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Մարզադպրոցի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

42. Մարզադպրոցն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

43. Մարզադպրոցի սեփականության պահպանման հոգսը կրում է Մարզադպրոցը:

44. Մարզադպրոցի սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:

45. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից Մարզադպրոցին ամրացված գույքը:

46. Մարզադպրոցն իրավունք չունի իրեն ամրակցված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու :

47. Մարզադպրոցն իրավունք չունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, բացառությամբ հիմնադրի և ավագանու սահմանած դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են, բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարներից, որոնք սահմանված կարգով

ուղղվում են համայնքային բյուջե: Մարզադպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

48. Մարզադպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

49. Մարզադպրոցի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50. Մարզադպրոցի ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը հանդիսանում է Վաղարշապատ համայնքի բյուջետային հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհներից: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

51. Մարզադպրոցի ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից Լիազորված համայնքային մարմինը:

52. Մարզադպրոցի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

53. Մարզադպրոցը վճարում է հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները՝ ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

V. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ

54. Մարզադպրոցը ունի հետևյալ մասնաճյուղերը՝

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Վ.Տերյան 971/7 հասցեում գտնվող մասնաճյուղը,

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Իսի Լե Մուլինո 5 հասցեում գտնվող մասնաճյուղը,

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Կոմիտաս 36/1 հասցեում գտնվող բացօթյա լողավազանը:

55. Կազմակերպության մասնաճյուղերը կարող են փոփոխվել, ավելանալ կամ պակասեցվել՝ Հիմնադիրի որոշմամբ:

VI. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

56. Մարզադպրոցի կրթա-դաստիարակչական գործընթացի մասնակիցները, որպես կանոն, մինչև 18 տարեկան պարապողներն են, նրանց ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները, սակայն ելնելով Մարզադպրոցի մասնաճյուղերի գործունեության ոլորտից այցելուների տարիքային սահմանափակում չի նախատեսվում:

57. Երեխաների ընդունելության ժամանակ Մարզադպրոցի տնօրինությունը պարտավոր է ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել Մարզադպրոցի կանոնադրությանը և այլ փաստաթղթերին, որոնք կանոնակարգում են Մարզադպրոցի գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու Մարզադպրոցի ներքին կարգապահական կանոններով:

58. Պարապողների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են Մարզադպրոցի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

59. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր, ըստ մասնագիտության, ունեն անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

60. Մարզադպրոցի մանկավարժն իրավունք ունի մասնակցելու Մարզադպրոցի կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

61. Մարզադպրոցի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

62. Մարզադպրոցի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթա-դաստիարակչական ծրագրերի կատարումը:

63. Մարզադպրոցում արգելվում է պարապողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

64. Պարապողների հետ իրավահարաբերությունները կարգավորում են պայմանագրային հիմունքներով՝ հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- 1) բարեխղճություն,
- 2) Մարզադպրոցի գույքի նկատմամբ խնամքով վերաբերմունք,
- 3) Մարզադպրոցի պարապողների և աշխատողների իրավունքների ու արժանապատվության նկատմամբ հարգանք,
- 4) Մարզադպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանում:

65. Մարզադպրոցի պարապողների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, սույն կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

VII. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

66. Մարզադպրոցի գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

67. Մարզադպրոցի շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

VIII. ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

68. Մարզադպրոցը կարող է վերակազմակերպվել և լուծարվել Հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաստատությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

69. Մարզադպրոցի լուծարման դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

70. Մարզադպրոցի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

IX. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

71. Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով և հիմնադրի որոշումներով: